Իմ գրադարանը

ՆԱՐ–ԴՈՍ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

EDIT PRINT
Publishing House

ԵՍ ԵՎ ՆԱ

Մի կորած մարդու յիշատակարանից

Այս յիշատակարանն իմ ձեռքն ընկաւ պատահական կերպով, թէ ինչպէս՝ հեգրաքրքրական չէ: Սա մի մեծ տետր էր, որի մէջ «կորած մարդը», ինչպէս ինքն էր ենթաւերնագրել իր յիշատակարանը, երկար տարիներ, համարեայ թէ օրը օրին գրի է անցրել իր անհատական կեանքի անցուդարձը:

Բոլոր կողմնակին, անհետաքրքրականը բաց թողնելով, ես ընտրեցի և մի ամբողջական պատմուածքի վերածեցի միայն այն գրանցումները, որոնք յիշատակարանի ողնուծուծն են կազմում և պարզում «կորած մարդու» տրագեդիան:

Այս էլ ասեմ. «կորած մարդը» իր յիշատակարանի այն մասը, որ վերաբերում է իր անկման տրագեդիային, վերնագրել է «Ես և նա»: Այդ վերնագրով էլ տալիս եմ տպագրութեան:

Նար-Դոս

ԵՍ

Ես ես սիրում էի նրան:

Կրկնեմ արդեօք սիրոյ այն խօսքերը, որոնք այնքան ծիծաղելի ու տաղտկալի են թւում կեանքի հմայքը կորցրած

սկեպտիկներին, բայց որոնք մի–մի յայտնութիւններ են նորա–բողբոջ սիրող սրտերի համար:

Ամէն անգամ, որ նայում էի նրա զարմանալի պայծառ աչքերին, որոնց մէջ կարծես արևն էր վառւում, ամէն անգամ, որ լսում էի նրա կենսաթրթիռ ծիծաղը, որի մէջ կարծես գարնանային չարաճճի վտակ էր քչքչում, ամէն անգամ, որ առնում էի նրան գիրկս ու ականջիս մօտ լսում նրա կուսական կրծքի հևքը, այտերիս վրայ զգում էի նրա թաւիշ մազերի էլեկտրականացնող շփումը, ինձ տիրում էր այնպիսի մի խենթ զգացում, որի ազդեցութեան տակ պատրաստ էի գործել եւ ամենամեծ առաքինութիւնը, եւ ամենամեծ ոճիրը՝ միայն թէ նա հրամայեր:

Սիրո՞ւմ էր նա ինձ նոյնպէս՝ այդ ես հիմա չգիտեմ, բայց այն ժամանակ լիովին հաւատում էի, որ չի կեղծում, երբ հաւատացնում էր, թէ սիրում է և երդւում էր, թէ մահն անգամ չի կարող անջատել մեզ իրարից:

Այն ժամանակ վերջին կուրսի ուսանող էի և շուտով պիտի աւարտէի իրաւագիտական ֆակուլտետը: Վստահ երիտասարդական թարմ ուժերիս և մանաւանդ հասա–րակական լայն գործունէութեան բուռն տենչանքիս վրայ՝ լցուած էի փառաւոր ապագայի վառ յոյսերով: Ոգևորուած այդ ապագայով և խրախուսուած երջանիկ սիրով, բուռն եռանդով առանց հանգիստ առնելու, պատրաստում էի աւարտական դիսերտացիայ, որը ապագայ մեծութեանս ու փառքիս հաստատուն հիմնաքարը պիտի հանդիսանար:

Բայց...

Օ՛հ, այդ «բայց»–ը...

Այժմ էլ, երբ ամէն ինչ կորած է, ամէն ինչ խորտակուած վերջնականապէս ու անդարձ, այժմ էլ, երբ յիշում եմ այդ

մոմենտները, քիչ է մնում ճչամ հոգեկան կարեվէր մի ցաւից՝ այն աստիճան այդ մոմենտները դեռևս չեն կորցրել ինձ համար իրենց սրութիւնը:

Սակայն շարունակեմ պատմութիւնս:

Մի անգամ, երբ հեռու հիւսիսում ուսանողական մենակեաց սենեակումս փակուած, դիսերտացիայիս վերջին գլուխներն էի գրում, մի նամակ ստացայ, որի մէջ ապշեցուցիչ անողոք անկեղծութեամբ գրում էր նա, որ իր սիրոյ նախկին հաւաստիացումներն ընդունեմ իբրև ցաւալի թիւրիմացութիւն և աշխատեմ մոռանալ իրեն, որովհետև ինքը ուրիշի կին է լինելու շուտով: «Գիտեմ, այս բանը շատ էլ հաճելի չպիտի լինի քեզ համար, բայց ի՞նչ արած, աշխարհիս մէջ ամէն բան պատահում է, և ամէն բան կարող է պատահել». այսպիսի հեգնակա՞ն ասեմ, թէ՞ դիւական անխիղճ խօսքերով էր վերջացնում իր նամակը:

Սկզբում կարևորութիւն չտուի այդ նամակին. կարծում էի, թէ մի կատակ է այդ, որով չարաճճին ուզում է զուարճալի մի խաղ խաղալ ինձ հետ կամ փորձել իմ սէրը: Բայց յետագայում որքան եղաւ նախ զարմանքս, յետոյ զայրոյթս և, ի վերջոյ, յուսահատութիւնս, երբ իրար հետևից գրած նամակներիս և հեռագրերիս և ո՛չ մէկի պատասխանը չստացայ: Ու երբ այս խենթացնող լռութիւնից յետոյ, կատարեալ յուսահատութեան մէջ, ինչ անելիքս չգիտէի, անսպասելի կերպով ստացայ մի լակոնական հեռագիր. «Ամուսնացայ»: Մի բառ միայն և ուրիշ ոչինչ: Այս հեռագիրը տուել էր, երևի, նրա համար, որ այլևս չձանձրացնեմ իրեն նոր նամակներով ու հեռագրերով:

Սկզբում այդ հեռագիրն ինձ այնքան էլ չազդեց, որովհետև արդէն նախապատրաստուած էի, բայց յետոյ նկատեցի, որ ինչ-որ քարացում, հոգեկան ապատիայ է եկել վրաս. իսկ

երբեմն էլ, մանաւանդ գիշերները, երբ քնել չէի կարողանում և ուղեղս գործում էր հիւանդագին յուզման մէջ, ինձ թւում էր, թէ խելագարւում եմ: Առաջ, երբ բնաւ չէի կասկածում նրա սիրոյն և լիովին հաւատացած էի, որ նա իմս է և իմս է լինելու, իմս անբաժան ու յաւիտեան, ինձ թւում էր, թէ այնպէս ուժգին չէի սիրում նրան, ինչպէս այժմ, երբ նա դաւաճանել էր ինձ, և ես արդէն կորցրել էի նրան առմիշտ ու անդարձ: Այդպէս է լինում միշտ. սիրոյդ առարկան կրկնակի սիրելի է թւում նրան կորցնելուց յետոյ:

Այլևս չէի հասկանում, թէ ինչ է պատահում ինձ. այնպիսի մի դատարկութիւն էի զգում շուրջս ու ներսս, որ կարծես ուղեղս հանել էին գանգիցս ու ինձ նետել մի անապատ՝ թափառելու սոսկալի մի ամայութեան մէջ, աննպատակ ու անղեկ, առանց ձգտումների, առանց իդէալների, առանց փրկութեան որևէ յոյսի: Մի բան միայն զգում էի շատ պարզ ու շատ որոշակի. դա վրէժի թոյնն էր, որ կաթիլ առ կաթիլ կուտակւում էր սրտիս մէջ և սպառնում պայթելու այն աղջկայ գլխին, որ այնքան անխղճօրէն անարգել էր ոչ միայն իմ ամենանուիրական զգացումները, այլև ինձ իբրև մարդու, և սպառսպուռ ջախջախել բոլոր յոյսերս, իմ ամբողջ ապագան: Քանի նա չէր դաւաճանել ինձ, ես մի արծիւ էի՝ հոգով ու մտքով բարձունքներում սաւառնող, այժմ դարձել էի թևերը կտրած ողորմելի մի ճնճղուկ՝ գետնի վրայ ցատկոտող: Կարո՞ղ էի ես այդ ներել նրան: Ու վճռեցի անողոք լինել դէպի նա նոյնքան, որքան անողոք եղաւ նա դէպի ինձ:

«Ես չկամ, թող ինձ հետ նա էլ չինի»,– ասացի ես ու մի օր վեր կացայ, թողի համալսարանն էլ, դիսերտացիան էլ, ամէն բան և եկայ վճիռս իրագործելու: Բայց այստեղ ինձ այնպիսի մի յուսահատութիւն էր սպասում, որի մասին բնաւ

չէի մտածել. դաւաճան աղջիկը մեկնել էր արտասահման իր, ինչպէս իմացայ, շատ հարուստ ամուսնու հետ:

Յուսալքումը նորից եկաւ տիրեց ինձ նոր թափով և այնքան ուժեղ, որքան վրէժի զգացումս մնացել էր անյագուրդ: Այն գիտակցութիւնը, որ ես կատարելապէս զինաթափ եմ եղած, պարզապէս խելագարեցնում էր ինձ: Ու եղաւ մի րոպէ, որ քիչ մնաց ձեռք բարձրացնէի ինքս ինձ վրայ՝ հոգեկան անտանելի տառապանքներիս միանգամից վերջ տալու համար: Բայց յետոյ մտածեցի, որ այդ արդէն չափազանց փոքրոգութիւն կը լինէր և, բացի այդ, յոյս ունէի, որ վաղ թէ ուշ կը հանդիպէի նրան, ինձ հասցրած անարգանքի փոխանցումը տալու:

Հոգեկան այդ դրութեանը նորից յաջորդեց ծայր աստիճան անտարբերութիւն ու անզգայութիւն դէպի ամէն ինչ: Ուժեղ ցնցումներ էին պէտք՝ ինձ այդ անտարբերութիւնից ու անզգայութիւնից հանելու համար, և այդ ցնցումները ես ուրիշ բանի մէջ չգտայ, բայց եթէ միայն ծախու կանանց և գիշերները լուսացնող ընկերներիս շրջանում: Կեանքի ճահիճը կամաց–կամաց ծծում էր ինձ, և ես չէի նկատում այդ: Ու, երբ նկատեցի, շատ ուշ էր. ես կորած մարդ էի արդէն:

Երբեմնի իրաւագիտութեան վերջին կուրսի ուսանող, փառաւոր ապագայի յոյսերով լեցուն, հասարակական լայն գործունէութեան երազանքներով թևաւորուած՝ այժմ դարձել էի դատարանների կողմանոցների կեղտոտ սեղանների վրայ զանազան խնդրագրեր ու կլեաուզներ գրող, զանազան մութ գործեր պաշտպանող, միշտ արբած և միշտ քնատ մի աբլակատ՝ այդ զզուելի տիպի բոլոր բացասական յատկանիշներով: Եւ իմ ամբողջ տրագեդիան այն էր, որ ես լիովին զգում ու գիտակցում էի այդ սոսկալի անկումը, բայց ելնել այդ տիղմից անզօր էի. ճահիճն արդէն ինձ շատ էր

ծծել իր խորքը: Եւ մի անգամ որ խաչ էի քաշել ինձ վրայ, յարութիւն առնելու այլևս անկարող էի զգում ինձ:

Մի անգամ (այդ մեր յարաբերութիւնների խզման հինգերորդ տարում էր) փողոցում բոլորովին պատահական կերպով, երես առ երես հանդիպեցի նրան՝ իմ սիրոյ նախկին առարկային: Այդ հանդիպումն այնքան անսպասելի էր ինձ համար, որ կարծես կայծակնահար գամուեցի տեղնուտեղը նրա առջև և ապշութիւնից ծափ զարկեցի ակամայ: Ըստ երևոյթին, նա սաստիկ վախեցաւ այդ անակնկալից և, ինչպէս նկատեցի, սկզբում բնաւ չճանաչեց ինձ: Եւ չէր էլ կարող ճանաչել, որովհետև իր ճանաչած նախկին միշտ լաւ հագնուած, լայնաթիկունք ու լայնակուրծք, 24–25 տարեկան գեղեցիկ ուսանողի տեղ այժմ տեսնում էր իր առջև կեղտից պլպլացող հնամաշ վերարկուով, մազակալած երեսով, պրոֆեսիոնալ արբեցողի կարմիր քթով, կուրծքը ներս ընկած սապատաւոր մի մարդ, որի բերանից էժանագին գինու, ծխախոտի և սխտորի հոտ էր փչում: Իսկ նա ամենևին չէր փոխուել կամ, աւելի ճիշտը, փոխուել էր դէպի այնքան լաւը, որ ոչ մի գեղագէտ նկարիչ չէր կարող նրա մէջ որևէ փուտ գտնել. նախկին մի քիչ նիհար, չարաճճի աղջիկը դարձել էր բարձրահասակ, փարթամ մի կին, որի մօտով անկարելի էր անցնել առանց յետ նայելու: Իսկ հագո՛ւստը: Ես, երևի, երբեք չէի կարող այդքան շքեղօրէն հագցնել նրան և զարդարել նրա ականջները, կուրծքն ու մատները շողակներով ու մարգարիտներով, որքան էլ որ արդարանային փառաւոր ապագայի վրայ մի ժամանակ ունեցած յոյսերս: Ամէն բանից երևում էր, որ ընկել էր մի մարդու ձեռք, որը ոչինչ չէր խնայում նրա համար:

Ապշութեանս հետ միասին ինձ տիրեց ակամայ մի

վարանում ու պատկառանք նրա այդ յաղթական շքեղութեան առջև, և ինքս ինձ երբեք այդքան չնչին, ողորմելի ու զզուելի չէի թուացել, ինչպէս այդ միջոցին: Մի րոպէ աշխատեցի հոգուս խորքում պրպտել վրէժի այն զգացումը, որ մի ժամանակ լափում էր ինձ և որի ազդեցութեան տակ այնքան հպարտ, այնքան անխոցելի ու արդարացի էի զգում ինձ, ու ոչինչ չգտայ, հոգիս միանգամայն ամայացել էր: Ու, երբ շփոթուած և կակազելով, ներողութիւն հայցող ձայնով փորձեցի յիշեցնել նրան, թէ ով եմ ես, նա սկզբում կարծես թէ զարմացաւ, շփոթուեց, յետոյ յանկարծ թողեց ինձ առանց մի խօսք անգամ արտասանելու, կառք նստեց և հեռացաւ, ըստ երևոյթին վախեցած, որ ես կարող եմ հետապնդել իրեն:

Այդ օրը ես անցկացրի գինետանը, որտեղից ինձ դուրս բերին թևերիցս բռնած:

Այնուհետև, այս հանդիպումից յետոյ, այն սակաւ ժամերին, երբ խմած չէի լինում և կարողանում էի քիչ թէ շատ խորանալ մտքերիս մէջ, ինձ շատ էր մտատանջում այն հանգամանքը, թէ ինչ էր բուն պատճառը, որ ես այս աստիճան ընկել էի: Իսկապէս որ, հոյ չէ՞ր կարելի այդ պատճառը դժբախտ սէրը համարել՝ մի բան, որը շատ-շատ կարող էր միայն ժամանակաւորապէս ընկճել, բայց ոչ առմիշտ կործանել մարդու: Դա անհեթեթութիւն կը լինէր:

Բուն պատճառը պէտք է որ ուրիշ տեղ լինէր: Ու սկսեցի այդ պատճառը որոնել սիրածս աղջկայ դաւաճանութիւնից դուրս, որոնել իմ էութեան մէջ, որովհետև անկարելի էր, որ ես այդ աստիճան ընկնէի, եթէ անկմանս սաղմերը չկրէի ինքս իմ մէջ: Բայց որո՞նք էին այդ սաղմերը, որտեղի՞ց էին ընկել իմ մէջ, ինչ էր նրանց արմատը՝ այս ուղղութեամբ կատարած պրպտումներս դեռ երկար ժամանակ մտատանջում էին

ինձ առանց որևէ եզրակացութեան յանգելու, մինչև որ, վերջապէս, միանգամայն պատահական կերպով գտայ բուն արմատը մի պատմուածքի ընթերցումից յետոյ, որը յանկարծ լուսաւորեց իմ մինչ այդ մութ ներքին աշխարհը:

Այդ պատմուածքն իտալական մի սիրաւեպ էր «Վրէժ» վերնագրով:

Այստեղ բառացի թարգմանութեամբ առաջ եմ բերում այդ սիրաւեպը, որի վերնագիրը, սակայն, դնում եմ «Նա», պատմուածքի հերոսին ինձ հակադրելու համար:

ՆԱ

1

Վենեցիայում, դոժերի, ջրանցքների և գեղարուեստների այդ հրաշակերտ քաղաքում, մի հին ազնուական ընտանիքի մէջ ապրում էր այդ ընտանիքի միակ զաւակը՝ գեղեցիկ Ջուլիետան: Այնքան էր գեղեցիկ նա, որ թւում էր, թէ հողեղէն չէ, այլ մի յաւէրժահարս, որ դուրս է եկել ծովի փրփուրներից: Աչքերը կապոյտ էին, ինչպէս Իտալիայի ջինջ երկինքը, հայեացքը զուարթ ու անհուն, ինչպէս Ադրիատիկի հորիզոնները: Ոսկեգոյն ծամերը սքանչելի գանգուրներով պսակում էին նրա փոքրիկ, սիրունիկ գլուխը: Երբ ժպտում էր (բայց ե՞րբ չէր ժպտում), նրա չքնաղ այտերի վրայ մատնահարներ էին գոյանում և փոքրիկ բերանի մէջ վարդագոյն շրթունքների տակ շողշողում էին փղոսկրի պէս սպիտակ ու ամուր մանրիկ ատամները: Միշտ զուարթ էր գարնան արևի պէս, միշտ թրթռուն՝ թիթեռնիկի պէս, միշտ չարաճճի՝ կայտառ երեխայի պէս: Երկու գոյն էր սիրում՝

կարմիր ու սպիտակ, և նրա արդուզարդի ու կրծքի վրայ միշտ անպակաս էին այդ երկու գոյնի ծաղիկները՝ մեխակը և շուշանը: Նա ինքը թարմ ու հոտաւէտ ծաղիկ էր՝ կարմիր կամ սպիտակ, նայելով թէ ինչ գոյնի հագուստ է հագնում՝ մեխակի պէս կարմի՞ր, թէ՞ շուշանի պէս սպիտակ:

2

Մի անգամ, գարնանային մի սքանչելի երեկոյ, որպիսին միայն Ադրիատիկի ափերումն է լինում, երբ Ջուլիետան իր հօր պալացցոյի վերին յարկի իր փոքրիկ սենեակում զբաղուած էր իր սպիտակ հագուստով և կրծքին մեխակի կարմիր ծաղիկն էր ամրացնում, որ զբօսանքի դուրս գայ Պոնտէ-Ռիալտոյի տակ Մեծ ջրանցքի վրայ, դրսից ինչ-որ նուագածութեան ձայն լսեց: Մի հմուտ ձեռք սէրենադ էր նուագում ջութակի վրայ: Ջուլիետան վազեց դէպի բաց պատուհանը և ցած նայեց դէպի փողոց:

Նուագողը մի պատանի էր՝ իտալական լայնեզր գլխարկով: Այնքան մեղանուշ, այնքան դիւթիչ էր նուագած եղանակը, որ Ջուլիետան կարծում էր, թէ իր սրտի լարերի վրայ են նուագում: Նա մեքենայաբար կիսով չափ դուրս հանուեց պատուհանից և լսում էր ամենայն ուշադրութեամբ: Իր ամբողջ էութեամբ լսողութիւն դարձած, ագահօրէն կլանում էր մարմինը փաղաքշող այն դիւթիչ ձայները, որ պատանի երաժիշտը հնչեցնում էր ջութակի լարերից, ինչպէս աղբիւրի ակունքը դուրս է հոսեցնում իր քչքչան ականակիտ ջուրը անբռնազբօսիկ ու սահուն: Շունչը պահել էր, որ ոչ մի հնչիւն չթռցնի: Սքանչացման արցունքը գոհարի պէս խաղում էր նրա աչքերի մէջ:

Վերջապէս լռեցին ջութակի հնչիւնները, և այդ հնչիւնների հետ կարծես ամէն ինչ լռեց բնութեան մէջ:

– Ո՞վ ես դու, նայի՛ր վերև, պատանի մաեստրոյ,– կանչեց բարձրից Ջուլիետան:

Պատանի երաժիշտը նայեց վերև:

– Հանիր գլխարկդ, երեսդ չեմ տեսնում:

Պատանի արտիստը վերցրեց լայնեզր գլխարկը, երկայն մազերը գլխի մի շարժումով յետ գցեց ճակատից և նայեց վերև: Ի՜նչ հրաշալի աչքեր, բայց լուրջ ու խոհուն և թախծալի, ինչպէս այն եղանակը, որ մի քիչ առաջ նուագում էր նա. ի՜նչ գրաւիչ դէմք, բայց գունատ ու տխուր, ինչպէս մարմարի մի անդրի. ի՜նչ բարձր ու հպարտ ճակատ, որի վրայ փայլում էր ոչ երկրային մի վեհութիւն:

– Ի՞նչ է անունդ,– կանչեց Ջուլիետան:

– Անտոնիո:

– Անտոնիո, նուագիր ինձ համար դարձեալ մի բան:

Ու նորից հնչեցին լարերն առաջուանից աւելի փաղաքուշ ու դիւթիչ, և Ջուլիետան, պատուհանին գամուած, չէր յագենում լսելուց, մինչև որ լարերն իրենց վերջին սիրակէզ հառաչանքն արձակեցին ու մարեցին:

– Անտոնիո, ասայ ինձ, ո՞վ ես դու:

– Ես որբ եմ:

– Ո՞վ է հայրդ:

– Մի բանուոր, որ մեքենայի տակ ջարդուեց և մեռաւ:

– Մա՞յրդ:

– Մայրս գնաց հորս յետևից:

– Քոյր չունե՞ս:

– Ո՛չ մի հարազատ:

– Կ՚ուզե՞ս ես քո քոյրը լինեմ, դու իմ եղբայրը: Ես կը

խնդրեմ հորս, որ դու մեր տանն ապրես և ինձ համար միշտ այդպիսի եղանակներ նուագես: Հայրս բարի է, շատ է սիրում ինձ և միշտ կատարում է խնդիրքս: Դու այլևս ստիպուած չես լինի փողոցէփողոց թափառել մի կտոր հացի համար: Մենք շատ հարուստ ենք:

– Ես շատ հպարտ եմ, սինեորինայ:

– Իմ անունը Ջուլիետա է:

– Ես հպարտ եմ, սիրուն Ջուլիետա:

– Մենք չենք խլի քո հպարտութիւնը, Անտոնիո:

– Կը խլէք, երբ ինձ մի կտոր հաց տաք:

Ջուլիետան մի դրամ նետեց նրա ոտքերի առջև և բարկացած հեռացաւ պատուհանից: Բայց իսկոյն էլ նորից մօտեցաւ պատուհանին:

– Անտոնիո՛,– կանչեց նա:

Պատանի երաժիշտը, որ վերցրել էր դրամը և ուզում էր հեռանալ, կանգ առաւ և նայեց վերև:

– Համաձայնիր գոնէ, որ ամէն երեկոյ, ճիշտ այս ժամին, կը գաս կը նուագես պատուհանիս տակ:

– Կը գամ: Բայց ոչ նորից սրա համար,– ասաց Անտոնիոն՝ ցոյց տալով ձեռքի դրամը:

– Ա՞յլ:

– Գեղեցկութեան համար:

Այս անգամ պատանի երաժշտի ոտների առջև ընկաւ գեղեցիկ աղջկայ կրծքի կարմիր մեխակը:

3

Ու գալիս էր:

Ամէն երեկոյ, երբ արևի վերջին ճառագայթները էլեկտ–

ական լոյսեր էին վառում պալացցոների պատուհաններին, Ջուլիետայի լսողութիւնը փաղաքշում էին միշտ նոր, միշտ դիւթիչ հնչիւնները:

– Անտոնիո՛, մի՞թէ այնքան հպարտ ես, որ չես համաձայնի բարձրանալ ինձ մօտ, իմ սենեակում նուագելու:

Անտոնիոն լուռ բարձրացաւ Ջուլիետայի սենեակը:

– Անտոնիո, մի՞թէ այնքան հպարտ ես, որ չես համաձայնի ինձ հետ մի զբօսանք կատարելու ծովի վրայ:

Լուսնի կաթնագոյն լոյսի տակ, ծովի հանդարտ ջրերի վրայ մեղմիկ սահում էր մակոյկը և գիշերային անհուն խաղաղութեան մէջ տարածւում էին դիւթական հնչիւնները: Ամբողջ բնութիւնը, կարծես լսողութիւն դարձած, ականջ էր դնում այդ հնչիւններին, որոնք թևատարած, սահուն ու թեթև, թռչում տարածւում էին չորս բոլորը և մարում ծովի խաղաղ ջրերի մէջ, պարզ ու թափանցիկ օդի մէջ:

– Անտոնիո՛, մի՞թէ այնքան հպարտ ես, որ թոյլ չես տայ գլուխս դնեմ ծնկանդ վրայ:

–Օ՜...– հառաչում է միայն պատանի արտիստը վառուած աչքերով և նրա կնտնտոցի տակ ջութակի հնչիւնները նոր թափ են առնում նոր, մինչև այդ չլսուած նիւանսներով:

Ջուլիետայի ոսկեգանգուր գլուխը հանգչում է Անտոնիոյի ծնկան վրայ և թաւշեայ աչքերը հիացքով, սիրով ու երջանկութեամբ վարից վեր նայում են պատանի երաժշտի վերասլաց դէմքին: Մակոյկի մէջ, լուսնի կաթնագոյն լոյսի տակ, ինչպէս ձիւն, փայլում էր նրա սպիտակ թեթև հանդերձը, որով նա նմանւում էր իսկական յաւէրժահարսի՝ ընկղմուած ծովի փրփուրների մէջ:

Պատանի արտիստը վերից վար նայում էր իր ծնկան վրայ հանգչող երազական գեղեցկութեանը և ինքը ևս զարմանում

էր, թէ այն ինչ նոր հնչիւններ են, որ իր ձեռքի շարժումից գեղում է ջութակն այնքան տիրականօրէն:

– Անտոնիո՛, միթէ այնքան, հպարտ ես, որ մի համբոյր չես տայ ինձ:

Ջութակը լռում է: Պատանի արտիստը կամաց խոնարհւում է յաւէրժահարսի դէմքի վրայ, նրանց մազերը գրկախառնւում են և թրթռուն շրթունքները միանում են մի բոցոտ համբոյրի մէջ:

– Անտոնիո՛, Անտոնիո՛...

– Ջուլիետա՛, Ջուլիետա՛...

4

Մի երեկոյ էլ, սովորական ժամին, պատանի երաժիշտը գոթական ապարանքի բարձր պատուհանի տակ կանգնած՝ իզուր աշխատում էր իր դիւթական հնչիւններով դուրս կանչել յաւէրժահարսին:

Պատուհանը փակ էր:

Պատանի արտիստը, սակայն, չէր յուսահատւում. ջութակը մերթ կանչում էր հրամայաբար, մերթ խնդրում աղերսագին, մերթ խօսում լալագին, մերթ հառաչում ու լալիս յուսահատօրէն:

Պատուհանը միշտ փակ էր:

Այնուհետև, երբ ջութակն իր վերջին յուսահատական ճիչերն էր արձակում, պատուհանի մի փեղկը կիսով չափ բացուեց, նախ մի դրամ զրնգաց գետնին և ապա թղթի մի կտոր, օդի մէջ պտտուելով, ցած ընկաւ պատանի երաժշտի ոտների առջև:

Թուղթը վերցրեց և կարդաց.

«Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կայ:

Մենք վերևն ենք, դու ներքևը, էլ մի՛ գա: Մոռացի՛ր ինձ»:

Կարդաց, առժամանակ շանթահար մնաց տեղնուտեղը արձանացած, յետոյ ցնցուեց ուժգնօրէն, մի կայծակնացայտ հայեացք նետեց դէպի ազնուական ապարանքի բարձունքը, թուղթը, ցասումով լի, ուզեց պատառ-պատառ անել, բայց զսպեց իրեն, խնամքով ծալեց, ծոցը դրեց, ոտով դէն շպրտեց գետնին ընկած դրամը և, ջութակը պինդ սեղմելով վիրաւոր կրծքին, հեռացաւ՝ անարգանքի կսկիծը հպարտ սրտի մէջ պարուրած:

Այդ օրուանից Վենեցիայի փողոցներում էլ ո՛չ ոք չտեսաւ հանրածանօթ պատանի ջութակահարին:

5

Անցան տարիներ:

Նորից Վենեցիան:

Քաղաքի ամբողջ մամուլն աւետեց հռչակաւոր ջութակահար Անտոնիո Բոնուինիի գալուստը, որ իր միակ կոնցերտը պիտի տար մեծ թատրոնում: Վերջին ժամանակները ոչ միայն իտալական, այլև եւրոպական ու ամերիկեան ամբողջ մամուլը խօսում էր այդ նոր փայլուն աստղի մասին, որ երևացել էր երաժշտական հորիզոնի վրայ:

Կոնցերտի գիշերը թատրոնում ասեղ գցելու տեղ չկար: Այնտեղ էր քաղաքի ամբողջ բարձր դասակարգը:

Անտոնիո Բոնուինի... Ամէնքն անհամբեր սպասում էին նրա ելոյթին:

Եւ ահա, վերջապէս, դուրս եկաւ նա բեմ:

Ու ամբողջ դահլիճը գրեթէ միաբերան հառաչեց:

Մի՞թէ սա այն Անտոնիոն չէ, որին ճանաչում էր ամէն մի վենեցիացի, այն պատանի ջութակահարը, որ միջնադարեան տրուբադուրի նման շրջում էր քաղաքից քաղաք, փողոցից փողոց, պատուհանների տակ նուագում էր սէրենադներ:

Այո՛, այո՛, նա է, ինքը, որովհետև՝ ահա՛ նոյն հնչիւնները, բայց այս անգամ արդէն առնականօրէն հասուն, ինքնավստահ, ինքնամփոփ, երբեմն վերասլաց, երբեմն մարտակոչի խիզախ աւիւնով լեցուն:

Ու որքան այդ հնչիւնները դիւթիչ էին, այնքան գեղեցիկ ու հմայիչ էր ինքը՝ Անտոնիո Բոնուինին, բարեկազմ հասակը, հրացայտ աչքերը, վառուած դէմքը, հանճարեղ ճակատը, ականջների մօտ ցրուած երկար փայլուն մազերը, բոլորը, բոլորը մի սքանչելի ներդաշնակութիւն էին կազմում նրա ջութակի մոգական հնչիւնների հետ:

Երբ վերջին հնչիւնները թրթռալով մարեցին գերեզմանային լռութեան մէջ և արտիստը հեռացաւ բեմից, ամբողջ դահլիճը դեռևս պահ մի նստած էր լուռ ու անշարժ, կարծես անհունօրէն քաղցր մի երազանքի մէջ կախարդուած: Ու յետոյ յանկարծ, որպէս մի գերեզմանոց մէկէն յարութիւն առնի, ամբողջ դահլիճը շրջուեց ու թնդաց որոտագին.

– Բոնուինի՛... Անտոնիո Բոնուինի՛... Անտոնիո՛... Հանճա՛ր... Նոր Ստրադիւարիուս...

Եւ ամէն ոք շտապում էր դէպի կուլիս՝ անձամբ սեղ-մելու երիտասարդ հանճարի ձեռքը և իր հիացքն ու շնոր-հակալութիւնը յայտնելու նրան:

Երիտասարդ մաեստրոն յոգնած էր: Փակուեց իր սենեա-կում և յայտնեց, որ այլևս ոչ ոքի չի կարող ընդունել:

Բայց ահա մտնում են և յայտնում, որ մի կին ուզում է նրան տեսնել:

– Անկարող եմ ընդունել:

– Թախանձում է սաստիկ. շատ նշանաւոր անձի ամուսինն է:

Ու տալիս են ազնուազարմ տոհմի մի բարձրաստիճան մարդու անունը, որից կախուած է հազարաւոր մարդկանց բախտը:

– Թող մտնի:

Գեղեցիկ՝ ինչպէս Ռաֆայէլի Մադոննան, հագնուած ինչ-պէս մի թագուհի, շտապով մտաւ մի նորատի կին և ուղղակի ընկաւ երիտասարդ հանճարի ոտների առջև:

– Անտոնիո՛, ես քո Ջուլիետան եմ, ես սիրում եմ քեզ...

Երիտասարդ մաեստրոն այլայլուած՝ բարձրացրեց գեղեց-կուհուն:

Նրա աչքերը վառում էին ինչ-որ տարօրինակ փայլով, նման այն հրացայտ հայեացքին, որ նա, դեռևս պատանի մի խեղճ երաժիշտ, նետեց իր ստորին ծագումն ու հպարտութիւնն այնքան մեծամտօրէն արհամարհող պալացցոյի բարձունքն ի վեր:

Առանց մի խօսք արտասանելու՝ ձեռքը ծոցը կոխեց, հանեց յուշատետրը, յուշատետրից՝ խնամքով պահած թղթի մի կտոր և մեկնեց Ջուլիետային:

Ջուլիետան առաւ, նայեց և յանկարծ կաս-կարմիր կտրեց:

– Կարդացէք, սինեորայ, կարդացէք,– ասաց Անտոնիոն, տեսնելով, որ նա ծայր աստիճան շփոթուած, չի համարձակւում աչքերը վեր բարձրացնել:

Ու հազիւ լսելի ձայնով Ջուլիետան կարդաց իր նամակը:

«Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կայ:

Մենք վերևն ենք, դու ներքևը: Էլ մի՛ գա: Մոռացիր ինձ»:

Անտոնիոն նամակը յետ առաւ նրա թուլացած ձեռքից և,

նորից խնամքով պահելով յուշատետրի մէջ, ասաց.

– Աւա՜ղ, սինեորայ, ներեցէք ինձ, որ ես չլսեցի ձեզ և թէպէտ այլևս չեկայ ձեզ մօտ, բայց չմոռացայ ձեզ, այլապէս ձեր այս նամակը այսպէս խնամքով չէի պահի ինձ մօտ: Սա մի անգնահատելի գանձ է, որ դուք պարգևեցիք ինձ, և այս գանձն աչքիս լոյսի պէս կը պահեմ մինչև մահս, որովհետև եթէ ձեր այս նամակը չլինէր, ես թերևս այն չլինէի, ինչ որ եմ այժմ: Ես չմոռացայ ձեզ, այո՛. բայց, ինչպէս երևում է, դուք մոռացել էք այն անդունդը, որ մեզ բաժանում էր իրարից: Դուք վերևն էիք, ես ներքևը, և այդ ձեզ իրաւունք էր տալիս արհամարհանքով նայելու դէպի ներքև: Բայց դուք հաշուի չէիք առել, որ ներքև գտնուողները երբեմն թևեր են առնում, թռչում վերև և վրիժառութեան զգացումով լեցուն: Այն օրը, որ դուք ձեր բարձունքից արհամարհանքով մերժեցիք ինձ՝ ներքև գտնուողիս, ես երդուեցի վրէժ առնելու և, դրա համար ուրիշ միջոց չգտայ, բայց եթէ միայն բարձրանալ, միշտ բարձրանալ, անդադար բարձրանալ, մինչև որ իր ձեռակերտ ապարանքի բարձունքից ինձ վրայ նայող քմահաճոյքն ինքը գար իմ անձեռակերտ բարձունքի առջև ծնրադրելու: Այսօր ես հասայ իմ նպատակին: Բայց նորից սիրել նրան, ով խաղում է ուրիշի նուիրական զգացումների հետ, ով տարբերութիւն է դնում վերևի և ներքևի միջև, աւա՜ղ, սինեորայ, ես չեմ կարող:

_____

Այսպէս էր վերջանում իտալական սիրաւեպը:

Մի սիրաւեպ՝ հար և նման իմ սիրաւեպին, մի սուր հակադրութեամբ միայն. այստեղ ես էի՝ իմ բուրժուական միջավայրի հարազատ ծնունդը, տաքուկ ապրելու սովոր, կամազուրկ, փափկամարմին մի ինտելիգենտ, որ առաջին իսկ հարուածից ընկնում է այլևս չելնելու համար,

իսկ այնտեղ նա՝ աշխատաւոր ժողովրդի ծոցից ելած անապաստան, թափառական մի պատանի՝ իր միջավայրի երկաթակուռ կամքով, որով զինուած, ոչ թէ ընկճւում է ինձ պէս առաջին իսկ հարուածից, այլ ընդհակառակը, ո՞վ գիտէ ինչ դժուարութիւններ յաղթահարելով, հետզհետէ բարձրանում է մինչև գլխապտոյտ բարձունքները, որպէսզի այնտեղից վրիժառութեան թոյնը թափի իր մարդկային արժանապատուութիւնն արհամարհողների, իրեն նուաստացնողների գլխին:

Բարձրանալ, միշտ բարձրանալ, անդադար բարձրանալ... Օ՜ ինչ հրաշալի վրիժառութիւն, որի համար, սակայն, ես անընդունակ եղայ:

Եւ այնուհետև ինչպէ՞ս չհաւատամ իմ դասակարգի ճակատագրին, որին բնական մի անէծքով դատապարտուած, նա հետզհետէ այլասերուելով, պիտի դառնայ ինձ պէս իբրև փտած ծառի կոճղին բսած մի մգլած մակաբոյծ և չքանայ անհետ, տեղի տալով նրա՛նց, որոնք ներքևից բարձրանում են վերև...